Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Ակնարկ, Արձակ
13+

Շիրվանզադե
Նամակներ հյուսիսից

1

Տասներկու տարի շարունակ ապրելով Թիֆլիսում, գործելով հայ գրականության և մամուլի մեջ, տեսնելով անընդհատ միևնույն շրջանը, միևնույն դեմքերը, միևնույն երևույթները, ես այնքան հոգնել ու ձանձրացել էի, որ ինձ թվում էր վերջին ժամանակ, թե իմ ջղերը բթանում են, զգացումները թմրում, միտքը պղտորվում: Ահա ինչու մի օր, վերջապես, վճռեցի, եթե ոչ մշտապես, գոնե անորոշ ժամանակով հեռանալ այն միջավայրից, որի օդը ընդունակ է խեղդելու և ոչնչացնելու ամենաառողջ մարդուն:

Հեռանալով այդ խեղդուկ միջավայրից, միևնույն ժամանակ ես վճռել էի ոչ միայն չմտածել նրա մասին, այլև խույս տալ այն ամենից, որ կարող է ինձ հիշեցնել նրան: Սակայն մեծ է սովորության ուժը: Որքան վատառողջ և վնասակար լինի մթնոլորտը, դարձյալ մարդ երկար տարիներ ապրելով այնտեղ ընտելանում է, դյուրությամբ չի կարողանում բաժանվել նրանից: Այն միջավայրը, ուր ստիպված է ապրել և գործել հայ հեղինակը, նեխված է, ապականված, բայց որպես մթնոլորտ, ունի իր կաշկանդող ուժը: Եվ հենց այդ ուժն է, որ այս րոպեիս, դեռ երկու ամիս չլրացած, հեռու հայրենիքից, հեռու իմ սրտին մոտիկ անգին էակներից, որոնց կյանքի հետ անխզելի կապված է իմ գոյությունը — ես դարձյալ մտքով սլանում եմ դեպի հայ գրականական աշխարհ և իմ հոգնած ձեռը, նորից եռանդ ստանալով, ակամա ձգտում է դեպի գրիչ:

Թող այդպես լինի: Ես մասամբ ֆատալիստ եմ, ընդունում եմ կատարվող երևույթների անհրաժեշտությունը, նրանց ղեկավարող օրենքները: Եթե իմ սրտի բոլոր ուժերով ատելով մի բան, դարձյալ հոգով ու մտքով ինձ կապված եմ համարում նրա հետ, կնշանակե այսպես էլ պետք է լինի և ուրիշ. կերպ չի կարող լինել:

Նստած եմ Նևայի խոնավ, միգապատ և անձրևոտ ափերում և այս րոպեիս պետք եմ զգում իմ տպավորությունները արձանագրելու, ամենից առաջ իմ առջև նկարվում է

այն ճանապարհը, որ բաժանում է Կովկասը լայնածավալ Ռուսիայից: Նա ձգված է կովկասյան հսկայական լեռնաշղթայի վրա, լի բնության հրաշալիքներով: Հասկանալի է, որ իմ խոսքը ռազմավիրական ճանապարհի մասին է, որ ոգևորել է ռուս խոսքի երկու հանճարեղ վարպետներին և հափշտակել է շատ ճանապարհորդների:

Հունիսի վերջին օրերից մեկն էր: Արեգակը նոր-նոր բարձրանում էր հորիզոնի վրա, երբ հինգ ճանապարհորդ կրող մեր կաբրիոլետը դուրս եկավ Թիֆլիսի փոստային կայարանից: Ես նստած էի երկրորդ կարգում: Իմ ուղեկիցներն էին Թիֆլիսի առաջին գիմնազիոնի մի ուսուցիչ և մի երիտասարդ օրիորդ— աշակերտուհի գիմնազիայի: Հետաքրքրական չէր ինձ համար իմանալ, ովքեր են իմ հարևանները: Ես պիտի առաջին անգամ տեսնեի բնության այն վայրերը, որոնց մասին դեռ մանկությանս օրերից լսել էի հազար ու մի գովասանքներ և հիացումներ: Ով գիտե զգալ և մտածել, նա չի կարող չհիանալ բնության հրաշալիքներով, իսկ ով գիտե հիանալ, նա շատ անհամբեր է, երբ սպասում է տեսնելու իր չտեսած, բայց անթիվ անգամ փառաբանված վայրերը: Իմ անհամբերությունը չափ չուներ, ես նմանվում էի մի ջղային մանկան՝ այն ժամերին՝ երբ կառքը կտրում էր ռազմավիրական ճանապարհի առաջին կայարանը: Ոչինչ չկար Թիֆլիսի և Մցխեթի մեջ, ոչինչ, բացի փոշուց, տոթից և փոշիով ծածկված կառքերից ու դանդաղաշարժ Կովկասյան սայլերից: Ահա ինչու շատ էլ ձանձրալի չէր իմ հարևան ուսուցչի խոսակցությունը Կովկասյան դպրոցների, ռուս դպրոցական վարչության, իր գլխավորների խելացի ու բարձր գաղափարական քաղաքականության և, վերջապես, ինձ նմանների ցնորքների մասին: Նա խոսում էր, ես լսում էի: Ես ոչ նրա ասածներին համաձայնելու քաջություն և խելք ունեի և ոչ էլ հակառակելու ցանկություն: Թող խոսի ինչ որ ուզում է, մտածում էի ես, իմ ուժից վեր է պատը բռունցքով խորտակելու: Եթե իմ հայ ծնվելը ինձ համար հանցանք են համարում Կովկասը քաղաքակրթել կամեցող խելացի ուսուցիչները, դա գուցե համոզմունքի խնդիր է, սակայն իմ համոզմունքներն էլ մազի չափ չեն վիրավորիլ ու ոչ էլ ստամոքսս կխանգարվի, եթե ես անտարբեր լինեմ մի քաղցրաբարո ուսուցչի լայնածավալ գաղափարներին:

Բայց լռիր, ով քաղաքագետ չինովնիկ, ահա մոտենում ենք պատմական Մցխեթի բերդին: Ես տեսնում եմ բարձրագագաթ, սեպաձև ժայռեր, որոնց ծոցում տեղավորված է վրաց ազգի պարծանք Թամարայի կացարանը: Այստեղ մի ժամանակ, վրաց ասպետներն ու հերոսները արծաթապատ եղջյուրները ձեռներին, իրանց թագուհուն շրջապատած, բաց սրտով— խմել են նրա կենացը: Այսպես է վայելել ինքը թագուհին իր երկու հայ զորապետների ձեռքով տարած հաղթությունների արգասիքը:

Ես տեսել էի Մցխեթը դեռ տասը տարի սրանից առաջ՝ Բաթում գնալիս: Թե՛ այն անգամ, թե՛ այս անգամ ինձ գրավեցին ոչ թե նրա բերդը, վանքերը և ուրիշ հնությունները, այլ բնության այն վայրերը, ուր կառուցված են նրանք: Խոստովանում եմ, ես հարգում եմ հնությունները, բայց երբեք նրանցով չեմ ոգևորվել: Եթե ասեմ, որ ժամանակ է թողնելու մեռելներին, որ իրանց մեռելներին թաղեն, ժամանակ է դադարել գերեզմանների վրա դատարկ արտասուք թափելուց, շատ հին բան ասած կլինեմ... Ով ուզում է ապագայում ապրել, պետք է մտածի ներկայի մասին: Անցյալի բեկորների վրա նոր շինություններ կառուցանել չի կարելի, այժմյան ճարտարապետության պահանջները միանգամայն ուրիշ են: Հնությունները գեղեցիկ են, բայց մահվան գեղեցկությունը նույնքան անախորժ է, որքան և՛ այլանդակությունը:

Քավ լիցի, որ ես այս խոսքերով կամենայի մի որևէ ակնարկություն անել մեր վրացի եղբայրակիցներին և հազիվ թե նրանք կարոտ են մի հայ գրողի ասածներին: Ես կցանկանայի միայն, որ այժմյան հայ ինտելիգենցիայի մի հայտնի մասը ձեռք քաշեր վերջապես վանքամոլությունից և համոզվեր, որ պատմության անիվը ետ դարձնել չի կարելի:

Կաբրիոլետի ձիերը փոխվեցին, և մենք դիմեցինք դեպի առաջ: Դարձյալ փոշի, տոթ, և մարդու աչքը հանգստանալու և ոչ մի գեղեցիկ վայր: Մի՞թե այս է այդքան գովված ռազմավիրական ճանապարհը:

— Սպասեցեք դեռ, կտեսնեք,— ասաց իմ ուղեկից քաղաքագետ ուսուցիչը, որը չմոռանամ ասելու մոլորուս էր:

Երիտասարդ գիմնազիստուհու աչքերը փայլեցին սպասվելիք զվարճությունից: Նա ևս առաջին անգամն էր գնում այդ ճանապարհով:

Եվ, իրավ, կեսօրից հետո տեսարանները սկսեցին փոխվել: Փոշին և տոթը տեղի տվեցին կիսալեռնային զովությանը և օդի հստակությանը: Ճանապարհի այս ու այն կողմերում սկսեցին երևալ կանաչազարդ թփեր, իսկ ավելի հեռու— ծառերի թմբեր, գեղեցիկ բլուրներ, լեռներ: Տեղ-տեղ այդ լեռների լանջքերը երևում էին կանաչից զուրկ կամ դեղնագույն, կամ մոխրագույն, և այդ բաց կտորները դարձնում էին նրանց խայտաբղետ:

Անանաուրի և Փասանաուրի մեջ արդեն սկսում է երևալ ռազմավիրական ճանապարհի առաջին գեղեցկությունը — անտառազարդ ձորերը և սարերը: Աջ ու ձախ կողմից լսվում է լեռների գագաթներից հոսող պարզ ու վճիտ առվակների կարկաչը: Ահա ծառերով սքողված ժայռերի միջով արագ-արագ վազում է դեպի մեր ճանապարհները, աստված գիտե, որ լեռան կրծքից բխող գետակը, մյուս կողմից, ավելի բարձրը ժայռերի կրծքով, աղմկելով ցած է գլորվում մի ամբողջ գետակ: Նրա ընթացքը այնքան սաստիկ է, որ ջուրը փրփուր է դառնում և երևում ինչպես մի հսկայական նեղ և երկար ղենջակ ձգված ժայռի կրծքով դեպի ցած: Իսկ այնտեղ, լեռների երկու շարքերի միջև, ձորով ընթանում է պատմական Արագվան, մերթ երևալով մեր ճանապարհի եզրում և մերթ թաքնվելով ձորի խորության և անտառների մթության մեջ:

— Բայց մի՞թե միայն սա է ռազմավիրական ճանապարհի սքանչելիքը,— հարցնում եմ ես դարձյալ քաղաքագետ հարևանիցս:

— Դեռ սպասեցեք, կտեսնեք,— ասում է նա և իր շագանականման քիթը ցցում օդի մեջ, ապակիի պես փայլող աչքերը հառելով դեպի մեր ճանապարհի խորքը:

Տեսածս գրավիչ էր, բայց ես կովկասում տեսել էի ավելի հիանալի վայրեր: Ես մտաբերեցի Դաղստանի սահմանում գտնվող Շահդաղ ձյունապատ լեռան տեսքը, նրա շրջակայքը դեպի Ղուբա քաղաքը, Դիլիջանի ձորը, Սանահնի և Խոժոռնիի ձորերը, Ախուրյան գետի եզերքը Արդինայի մոտ և վերջապես Շամախու շրջակայքը: Եվ այդ բոլորը հիշելով, ես սկսում էի հիասթափվել ռազմավիրական ճանապարհի վերաբերմամբ:

Դա առաջին օրն էր: Երեկոյան հասանք Մլեթ կայարանը, ուր սովորաբար գիշերում են կաբրիոլետները: Այժմ, երբ հիշում եմ մյուս օրվա զգացած իմ բարձր հաճույքը, որ պարգևեց ինձ բնությունը, հիշում եմ նաև այդ առաջին գիշերվա իմ կրած տանջանքը: կայարանի սենյակները բռնված էին, իմ ուղեկից քաղաքագետը և ես ստիպված էին, սենյակ վարձել կայարանի վերնահարկի հյուրանոցում: Դա ռազմավիրական ճանապարհի կառավարող հիմնարկության սյուրպրիզներից մեկն է: Մարդ Թիֆլիսից մինչև Վլադիկավկազ 200 վերստ ճանապարհի համար ավելի է վճարում, քան Վլադիկավկազից մինչև Պետերբուրգ ավելի քան 2500 վերստի համար և կայարաններում գիշերելու տեղ չի գտնում, բայց երանի միայն ես դուրս մնայի, իսկ քաղաքագետ ուղեկիցս տեղ գտներ կայարանում: Այն ժամանակ այդ մարդը ինձ այնքան չէր տանջիլ այդ գիշեր: Սխալվեցի այդ մարդու հետ հյուրանոցում միասին

վարձեցի սենյակ: Նախ, նա մի լավ ինձ ջարդեց, ջարդուփշուր արեց իր քաղաքագիտությամբ և բարձր «հանրամարդկային գաղափարներով այնքան խոսեց և այնքան աշխատեց ինձ համոզել: Երկրորդ կեսգիշերից հետո անկողին պառկելով, նա սկսեց մի այնպիսի խռմփոց, որ ամբողջ գիշեր ինձ թվում էր. թե մի չար ձեռք խարտոցում է անկողնակալիս ոտները:

Վերջապես չարաբախտ գիշերը լուսացավ, և այդ օրը ինձ համար բերեց մի անսահման հաճույք:

II

Մլեթի դեմ Արագվայի վրա կանգնած քարե կամուրջը կարելի է համարել մի միջակետ, որ ամբողջ ռազմավիրական ճանապարհը բաժանում է երկու միմյանցից տարբեր մասերի: Թիֆլիսից մինչև այդ կամուրջը տեսարանները մեղմ են, կանաչազարդ, ժայռերը ծածկված ծառերով և ընդհանրապես չեն կարող զարմացնել Կովկասին քիչ թե շատ ծանոթ մարդուն:

Միայն անցնելով Արագվան և ոտք դնելով Գուդաուրի ճանապարհի վրա, մարդ սկսում է զգալ բնության վեհ ազդեցությունը:

Արեգակը նոր-նոր բարձրանում է վեր, դուրս լողալով հորիզոնը պատող ամպերի միջից և, ինչպես մի քնքուշ նորահարս, կամացուկ և նազելի բաց անում իր առավոտյան զվարթ և պայծառ դեմքը: Լեռների լանջերին և գագաթների վրա կույտ-կույտ սահում են նոսր ամպերը՝ թողնելով լեռնային բուսականության վրա իրանց խոնավ հետքը: Կամուրջի դիմաց, դեպի ձախ երևում է մի ինչ-որ գյուղ այնպիսի բարձրությամբ, որ հազիվհազ նշմարվում են նրա խրճիթները: Բայց ահա մեր յոթ ձիերով լծված կառքը արագ-արագ բարձրանում է գետի ձախ կողմով վեր, և գյուղը հետզհետե հավասարվում է մեզ, հետո ցածրանում և մնում մեր ոտների տակ:

Սրընթաց Արագվայի ձայնը քանի գնում խլանում է և ապա անլսելի դառնում: Որքան մենք բարձրանում ենք, այնքան նա փոքրանում է և վերջ ի վերջո դառնում մի նեղ մոխրագույն ժապավեն, ձգված անհուն անդունդի երկարությամբ: Դեպի աջ՝ անընդհատ ուղղագիծ ժայռեր, միմյանցից բարձր, միմյանցից վիթխարի, դեպի ձախ՝ անհուն խորխորատ— ահա ընդհանուր տեսքը այն ճանապարհի, որ կոչվում է Գուդաուր: Տեղ-տեղ մեր կառքը անցնում էր ժայռերից կազմված բնահան միապաղաղ կամարների տակով: Ահա մի ահագին բեկոր, ճեղքված, բաժանված լեռան կրծքից, հազիվհազ կանգնած է յուր պատվանդանի վրա: Թվում է, որ բավական է մի թույլ շարժում, նույնիսկ ձիերի մի խրխնջոց, և բեկորը օդի տատանումից կանջատվի իր հիմքից և որոտալով կթավալվի ցած, մեր գլխին: Կառքը անցնում է աջող, և ճանապարհորդը ակամա հառաչում է, մի թեթևություն զգալով: Բայց ահա մի ուրիշ ավելի երկյուղալի բեկոր. նույն զգացումը, նույն ակամա ուրախությունը, որ անվտանգ անցար:

Գարնանը ձմեռվա ձյուները հալչում են: Ժայռերը փափկանում խոնավությունից, գոյանում են ճեղքեր և այդ ճեղքերից առաջանում են վտանգավոր բեկորները: Եղել են դեպքեր, որ այդ բեկորները ընկել են անցորդ կառքերի վրա և, հարկավ, մարդկանց ու ձիերին միջատների պես ջարդել: Այժմ ևս երևում են այդ սպանիչ բեկորները այս ու այնտեղ կանգնած ճանապարհի ձախ կողմում: Պատահում է, որ կառապանները զգուշության համար կապում են կառքի զանգակները և նախազգուշացնում ճանապարհորդներին բարձր ձայնով չխոսել, ինչպես այդ անում են ձմեռը, միշտ ձյունի կույտերի ժամանակ, որպեսզի օդի տատանումներից այդ կույտերը չխորտակվեն:

Ամեն քայլում մարդ զգում է իրան մահու դեմ կանգնած և ամեն վայրկյան իր ոչնչությունն է տեսնում բնության մեծության առջև:

Գուդաուրի ստորոտում գրեթե ճանապարհի սկզբում ժայռի կրծքին կպցրած է մի մեծ մետաղյա տախտակ, որի վրա ահագին ոսկի տառերով գծված է այն ինժեների անունը, որի «ծրագրով և աշխատությամբ կառուցված է ռազմավիրական ճանապարհը»: Թող այդ ոսկե տառերը երկար տարիներ փառաբանեն գիտնական ինժեների անունը, բայց մտածող մարդու համար նա այնքան ազդեցիկ չէ, որքան այդ ժողովրդի անունը, որ առանց գիտության միջոցների, առանց մեքենաների, լոկ իր բնական հնարագիտությամբ և անվեհերությամբ կարողացել է առաջին անգամ բաց անել այդ գեղեցիկ, վեհ և ահռելի ուղին Կովկասյան լեռնաշղթայի վրա: Նայեցեք դեպի վեր, սեպաձև ցցված ժայռերի գագաթին: Այնտեղ, երկար հովվական ցուպը ձեռին, գդակը աչքերին քաշած, կանգնած է հենց այդ՝ մի ժամանակ քաջ և անկախ համարված՝ ժողովրդի այժմյան աղքատ, կիսամերկ, խեղճացած որդին:

Վրացի է նա թե օս — չգիտեմ: Գիտեմ միայն, որ նա այդ լեռների հարազատ զավակն է, նրանց կոշտ աշխարհում ծնված, նրանց ցրտության մեջ մեծացած, նրանց խստաշունչ օդով սնված: Նա այնքան հարազատ է այդ վայրերին, որ այժմ արձանացած կանգնած, թվում է ժայռի մի փոքրիկ, հազիվ նշմարելի մասնիկը: Նույնիսկ նրա ողորմելի ցնցոտիները ունեն իսկ և իսկ նույն գույնը, ինչ որ ժայռը: Նա իր այժմյան հարստության — մի քանի տասնյակ ոչխարների համար գտել է մի կտոր կանաչավետ հող այդ քարաժայռի կրծքում և արածացնում է նրանց: Չորս կողմից այդ կանաչավետ կտորը շրջապատված է սրածայր բնական քարե պատնեշներով: Աստված գիտե, ինչպես է հովիվը յուր փոքրիկ հոտը քշել դեպի այդ գրեթե ուղղագիծ, անմատչելի վայրը: Մի ուրիշը դարձյալ մի այլ անմատչելի ժայռերի մեջ խոտ է հնձում: Ի՞նչպես պիտի ժողովի իր հունձքը և դուրս տանի այդտեղից — միայն ինքը գիտե: Բայց նա աշխատում է, կռվելով բնության խստության դեմ և աշխատում է շուռ ու մունջ:

— Ինչո՞ւ լուռ ու մունջ, մի՞թե այդ հնձվորը երգ չունի, որ երգի, այդ հովիվը սրինգ, որ նվագի:

Ես ամբողջ ճանապարհին չլսեցի ոչ մի հնչյուն սրնգի, ոչ մի երգ բանվորի, և այդ լռությունը, կարծես, ավելի էր համապատասխանում բնության մռայլ տեսարաններին...

Մինչդեռ ես այս դառն մտածությունների մեջ էի, մեր կառքդ բարձրանում էր վեր ու վեր: Մերթ ընդ մերթ սրընթալով մեր դեմ գալիս էին զանազան ձևի ու մեծության կառքեր: Ճանապարհին Ընտելացած ձիերը թռչում էին ցած, գնդակների արագությամբ, իրանց հետևից օդի մեջ բարձրացնելով փոշիի թանձը կույտեր: Հմուտ կառապանը գիտե նրանց վարել: Անփույթ նստած իր տեղում՝ նա արհամարհանքով է նայում դեպի մի կողմ, ուր բացված է խոր անդունդը: Սակայն բավական է, որ ձիերը մի փոքր շեղվեն իրանց ուղղությունից, և կառքը թավալվելով կանհայտանա խորխորատների մեջ:

Կայարան հասանք թե չէ, մեր կառքի ներսում նստած երկու ճանապարհորդներից մեկը — զվարթ դեմքով մի երիտասարդ գերմանացի — մոտեցավ մեզ և սկսեց գանգատվել իր հետ նստած պարոնի վրա: Դա թթված դեմքով, կապույտ ակնոցներով մի երիտասարդ ռուս էր:

— Ես կտրաքեմ այդ մարդու հետ նստելով, — ասում է գերմանացին: — Երկրորդ օրն է միասին նստած ենք, երկու խոսք չի խոսել: Իսկ ինձ բնության տպավորությունները խեղդում են, ուզում եմ խոսել, արտահայտել իմ զգացածը:

Հետո հայտնվեց, որ անխոս պարոնը կոկորդի հիվանդություն ունի, բժիշկներից պատվեր է ստացել չխոսել: Հիշեցի անմոռանալի Ադամյանի ցավը. որքա՜ն, երևի, տանջվել է նա այն ժամանակ, երբ զգացումները կուտակվել են, և արտիստը չի կարողացել արտահայտել նրանց:

Մտքումս ցանկացա, որ այդ օրը նույն ցավով, գոնե մի քանի ժամով վարակված լիներ իմ հարևան քաղաքագետ մանկավարժը, որ հակառակ ակնոցավոր պարոնին, արդեն չափից դուրս ի չարն էր գործ դնում իր կոկորդի լարերը:

Գուդաուր կայարանը ճանապարհի ամենաբարձր կետն է. մինչև այժմ բարձրանում էինք, այժմ պետք է ցած գայինք, անցնելով այսպիսով Կովկասյան լեռնաշղթան: Կայարանից մենք կարճ ճանապարհով մի քանի վերստ գնացինք ոտքով. մինչև որ մեր կառքը կպտտեր լեռան շուրջը: Բարձրացանք ճանապարհի ամենավերին կողմը, ուր, մոռացել եմ ինչ հիշատակի համար, կանգնեցրած է մի խաչ: Խորհուրդ եմ տալիս ամեն մի ճանապարհորդի այդ կտորը ոտով անցնել, եթե միայն ժամանակը ձմեռային չի և եթե նա կամենում է տեսնել լեռնային ծաղիկների ամենաընտիր տեսակները: Ինձ թվում էր, որ անցնում եմ մի ամենաշքեղ արքայական ծաղկանոցով, այնքան բազմատեսակ են ծաղիկները, այնքան առատ և հոտավետ: Մենք կազմեցինք մի-մի գեղեցիկ փունջ, որ վերջը նվիրեցինք մեր ուղեկից օրիորդին, մեծ հաճույք պատճառելով նրա պատանեկան դեռևս անասնական հոգուն ու սրտին:

III

Ես սովորություն չունեմ ճանապարհորդության միջոցին ամեն մի տպավորություն և դիտողություն մտցնել հուշատետրիս մեջ: Առաջինը, դրա համար հարկավոր է ունենալ մանրակրկիտ վիճակագրողի ճշտապահություն, որպեսզի ամեն որպե չձանձրանաս գրպանից հանել տետրդ և խազխզեք ամեն բան: Երկրորդ՝ իմ կարծիքով, չպիտի նշանակություն տալ անխտիր այն բոլորին, ինչ տեսնում ես: Կան բաներ, որոնք որպեսզես են ազդում մարդու վրա, անցնում է մի քանի օր, և նրանք անհետանում են մարդու հիշողությունից: Դրանք արժանի չեն ուրիշներին հաղորդելու: Բարվոք եմ համարում շատ բան թողնել իմ զգայարանների կամքին: Եթե մի երևույթ կամ պատկեր ինքնըստինքյան խորը տպավորվում է իմ հիշողության մեջ և ոչ միայն երկար ժամանակ չի անհետանում, այլև կենդանի պատկերանում է իմ աչքի առջև ամեն անգամ հիշելիս — դա եմ միայն նկարագրության արժանի համարում:

Հիշում եմ, որ մեր կառքն անցնում էր Դարիալի ձորով, քանի գնում, իմ տպավորությունները բարդվում էին, ես հետզհետե թուլանում էի ու ընկճվում նրանց զորության տակ: Զգում էի, որ արյունս երակներիս մեջ սկսում է վազել ավելի արագ, սիրտս ուժգին բաբախում է, այնչափ զորեղ էր իմ տեսած բնական տեսարանների տպավորությունները: Ահա ինչու այժմ ևս, երբ ամիսներ են անցել, կատաղի Թերեքի մռնչյունը հնչում է իմ ականջին և պարզ, որոշ պատկերացնում են իմ աչքի առջև այն բարձրագագաթ լեռները, որոնց ձյուներից գոյանում է այդ խելագար գետը, նաև այն հսկայական մռայլ քարաշղթան, որի երկու անընդհատ հյուսվածքի միջով վազում է նա: նկարագրել ամբողջ Դարիալի ձորը մի թռուցիկ նամակի մեջ՝ անկարելի է: Ես մտադիր եմ այդ փորձն անելու մի ընդարձակ վիպական աշխատության մեջ, որի բովանդակությունը կապ կունենա այդ վայրերի հետ: Վայրեր, որոնք վկա են եղել հարյուրավոր պատմական անցքերի և ուր ամեն մի քար ներկված է մարդկային արյունով: Սակայն, կրկնում եմ, պատմության մեռյալ փաստերը չեն, որ պետք է գրավեն կենդանի և զգայուն մարդուն, այլ նրանց այժմյան ողբալի հետևանքները: Զգայուն մարդը, անցնելով այդ վայրերով, տեսնում է միմյանցից տխուր բնական

շիրիմներ անհուն բարձրությամբ, որոնց տակ թաղված են հազարավոր մարդկանց ոսկորներ: Կամա, ակամա նա ընկնում է այդ ծանր խորհրդածության մեջ, թե ինչու այդ վայրերի նախկին բնակիչները չկարողացան այդ ժայռերը մի-մի փառքի սյուն դարձնել և ընկան...

Թերեքի մռնչյունը այդ մասին մի մշտական անընդհատ բողոք է դեպի աստված և հանդիմանություն այն ժողովրդին, որի նախահայրերը միայն մի չքավոր, խղճալի և ողորմելի պատմական ժառանգություն են թողել... Կընդհատվի՞ արդյոք այդ դառն հանդիմանությունը. կկարողանա՞ն արդյոք ժառանգները երբևէ իրանց վրայից ջնջել նախահայրերի թողած ամոթաբեր արատը— դժվար է գուշակել: Բայց անցորդը շատ ծանր տպավորություն է ստանում այդ վայրերից և նրանց այժմյան բնակիչներից: Ամեն տեղ տիրում է մեռելություն: Միայն երբեմն նեղ ձորերի և կիրճերի մեջ երևում են քանի մի մոխրագույն կետեր: Եթե այդ կետերից բարձրացող ծուխը չլինի, հազիվ մի մարդ կարող է կարծել, թե դրանք մարդկանց կացարաններ են և ոչ կենդանիների որջեր:

Այն ինչ՝ այդ հողի և քարի կույտերի այն ողորմելի ժողովածուները տեղական ժողովրդի լեզվով գյուղեր են կոչվում:

Ահա ինչու այդ մռայլ ամայության և չքավորության մեջ մի կենդանի հանդիսարան է թվում մաքուր պահվող խճուղին, որի վրա անընդհատ անցուդարձ են անում զանազան տեսակի կառքեր, տանելով իրենց մեջ աշխարհի ամեն ծայրից եկած տուրիստներ: Իբրև ժամանակակից կուլտուրայի մի բարակ ու թույլ գիծ, խճուղին անցնելով կիսավայրենի երկրով, ձգում է լուսավորության մի տկար շողք իր շուրջը: Բայց ի՞նչ է առաջացնում այդ շողքը:— Ճանապարհի աջ ու ձախ կողմերում ոտաբոբիկ, կիսամերկ, կեղտոտ տղաների խմբակներ, վայրենի ծաղիկներից կազմած մի-մի փոքրիկ փնջիկ ձեռներին՝ կանգնած սպասում են հեռվից երևացող կառքին: Մոտենում է կառքը, նրանք շրջապատում են և սկսում վազել նրա երկու կողմով, ամբողջ մի վերստ, ձգելով փնջիկները ճանապարհորդների վրա, որպեսզի մի քանի կոպեկ ստանան: Խե՜ղճ մանուկներ, ձեր ողորմելի աղերսանքները, որ բնավ չեն համապատասխանում այդ վիթխարի ժայռերի հպարտությանը, մարդու սիրտ են մորմոքում: Եվ մի”թե այդ խճուղին շինված է, որ ձեզ մուրացկանություն սովորեցնի...

Կազբեկ կայարանում, համանուն գյուղի ծայրում գրեթե խճուղիի եզրին կանգնեցրած է վրաց միակ վիպասանի՝ Կազբեկի, վերջին աստիճանի անշուք արձանը:

Եթե չեմ սխալվում, այստեղ է նույնիսկ թաղված հանգուցյալի դիակը:

Մեր անցնելու միջոցին Կազբեկ լեռան գագաթը ծածկված էր նոսր ամպերով, բայց նրա լայնածավալ սառցարանները պարզ երևում էին հեռվից, իրենց նուրբ մոխրագույն տեսքով որոշվելով ձյունապատ լեռան մյուս մասերից: Ցավալի էր, որ առաջուց չգիտեի, թե կայարանից կա առանձին ուղի դեպի այդ սառցարանները, և տուրիստները ձիով գնում են այդ ուղիով դեպի Կազբեկ: Եթե իմացած լինեի, չէի վերցնիլ տոմսակ ուղիղ մինչև Վլադիկավկազ, և այն ժամանակ կարող էի առանց ավելորդ ծախքի մի օրով շեղվել ճանապարհից տեսնելու այդ սառցարանները, որոնց մասին այնքան կարդացել եմ և լսել:

IV

Հետաքրքրությունից դրդված ես վճռել էի այցելել Հյուսիսային Կովկասի մի քանի հայաբնակ քաղաքներ: Վլադիկավկազում վճռել էի մնալ երեք օր, բայց անակնկալ

պատճառներով չկարողացա հինգ ժամից ավելի մնալ, ուստի առիթ չունեցա դիտելու տեղական հայերի կյանքը: Միայն մի քանի ժամ կառքով պտտելով քաղաքը, կուլ տվեցի այդ կեղտոտ քաղաքի կեղտոտ փողոցների փոշին:

Քաղաքի կենտրոնով անցնելիս՝ շատ խանութների ճակատին կարդացի հայ ազգանուններ: Մի անձնավորության հասցեն իմանալու նպատակով մտա խանութներից մեկը, որի առջև ուռած-փքված կանգնած էր նրա տերը: Դա կարմիր այտերով, ճարպոտ աչքերով, մաքուր հագնված մի երիտասարդ էր, այնքան գոռոզ և ինքնաբավական դեմքով, որ կարծես տաճիկ փաշան լիներ և նոր էր ստացել սուլթանից առաջին աստիճանի Մեջիդե՝ սասունցիներին կոտորելու համար: Բայց չկարծեք հայ փաշան ստրուկներ չուներ: Ահա խանութի ներսում, ձեռները կրծքներին դրած, հլության զազրելի դրոշմը ճակատներին, կանգնած են տասնի չափ երիտասարդ հայ գործակատարներ և ակնածությամբ դիտում են իրանց աղայի ամեն մի շարժվածքը:

Ես խոսեցի հայերեն, վաճառականը պատասխանեց նույն լեզվով, իսկ գործակատարները, երևի իրանց քաղաքակրթությունը ցույց տալու համար, բարբառեցին ռուսերեն: Բայց վայ այն ռուսերենին, որով նրանք խոսում էին, ինչպես և աստված հեռու պահի նրանց աղայի խոսած հայերենից: Հայ վաճառական դասը առհասարակ սիրում է բոլոր օտար լեզուներով խոսել, բայց ես դեռ չեմ տեսել մի վաճառական, որ մի որևէ լեզվով կանոնավոր և անսխալ խոսեր:

Վլադիկավկազից մինչև Արմավիր ես վերցրի երկաթուղու երրորդ կարգի տոմսակ: Բախտի բերմամբ ընկա մի այնպիսի վագոն, ուր ինչ ազգի գավակ ասես կային: Դեմուդեմ երկու նստարանների վրա նստած էին մի հայ, երկու թուրք, մի վրացի և մի հրեա: Ես միացած այդ միջազգային խառնուրդին: Հայը տիրացու էր, թուրքերը վաճառական, հրեան արհեստավոր, վրացին գինեվաճառ: Թուրքերից մեկը, որ հագնված էր եվրոպական ձևով, խոսում էր կովկասյան բոլոր լեզուներով: Դա մի երիտասարդ մարդ էր, որ, չնայելով իր նորատարազ հագուստին, ոտքից մինչև գլուխ նույն քյալբյահին էր, ինչ որ իր հայրերը և նախահայրերը: Նա տեղի-անտեղի ծաղրում էր, որ մի պատկառելի ծերունի էր Ահարոնի կերպարանքով: Վրացին հըռ-հըռ ծիծաղում էր: Իսկ հայ տիրացուն կաշվից դուրս էր գալիս թուրքին ծաղրելու: Մի խոսքով ընդհանուր և փոխադարձ ծաղրածություն էր տիրում, որի ժամանակ ամենից համեստ էր և համակրելի ծերունի հրեան: Հայ տիրացուին չէր հաջողվում ծաղրել. վասնզի նրա սրախոսությունները, որ միայն իրան էին ծիծաղեցնում, նույնքան բութ էին, որքան նրա դեմքի արտահայտությունը: Թուրքի ծաղրածության նյութերից մեկն էլ հրեաների անմաքրասիրությունն էր: Բայց ինքը թուրքը ոտից մինչև գլուխ արևելյան անմաքրության մի տիպար էր՝ մանավանդ իր սև և ճարպոտ ձեռներով:

Արմավիրում ես մնացի չորս օր: Այդ ահագին գյուղը իր ընդարձակ փողոցներով, գեղեցիկ տներով և հարուստ մագազիններով կարող է մրցել Կովկասի ամեն մի նահանգական քաղաքի հետ: Նրա ավելի քան 20 հազար բնակիչների մեծամասնությունը հայեր են, որոնք խոսում են չերքեզերեն, շատ քիչ բացառությամբ: Վեհափառ կաթողիկոսի այցելությունը նրանց վրա խորին տպավորություն է թողել և ամեն տեղ, ուր որ լինում էի, այդ մասին էին խոսում: Հաճելի էր նկատել, թե ինչպես այդ կորած, մոլորված հայերը աշխատում են այժմ իրանց մայրենի լեզվով խոսել: Մի ձգտում, որին կարող է բավականություն տալ Հաշտարխանի թեմական դպրոցի բացվելը: Հասարակության ինտելիգենտ մասի խոսակցության գլխավոր առարկան այդ դպրոցն էր իմ այնտեղ եղած ժամանակ և շատերն այնքան չափից դուրս են զբաղված այդ խնդրով, որ չեն ուզում նրանից դուրս ավելի կարևոր խնդիրներով զբաղվել: Այն հարցը, թե որտեղ ավելի հարմար է բանալ դպրոցը— Հաշտարխանո՞ւմ, թե՞ Արմավիրում— թեմի ժողովրդին բաժանել է երկու կուսակցության: Մեծամասնությունը Արմավիրի կողմն է, որ, արդարև, ավելի շատ հարմարություններ

ունե: Արմավիրի համար առանձին ջանքով աշխատում է տեղական Գևորգ քահանա Սեֆերյանը, որ մի եռանդուն երիտասարդ չերքեզահայ է գեղեցիկ ձգտումներով: Չերքեզահայերը ընդհանրապես իրենց պարզությամբ և անկեղծությամբ շատ սիրուն տպավորություն են անում: Սակայն մի խումբ թերխաշ անձնավորություններ, մեծ մասամբ եկվորներ, այդ պարզ ժողովրդի մեջ ևս ձգտում են մտցնեք կուսակցական պառակտումներ: Կուսակցություն ասելով, իհարկե, չպիտի կարծել, թե այդտեղ որևէ գաղափարական կռիվ կա: Նա ուրիշ ոչինչ է, եթե ոչ վարժապետների համար պաշտոնի, իսկ տերտերների համար— ծուխի խնդիր: Միայն պառակտում ձգտողները իրանց ողորմելի որկորը հասարակության հաշվով հագեցնելու համար մտնում են այս կամ այն լրագրի անվան տակ: Մեկը մի լրագիր է ընտրում իր գծուծ շահերը պաշտպանելու համար, մյուսը մի ուրիշ լրագիր. և դրանցից են առաջանում այն «ական»-ները, որոնցով այսօր լիքն են գավառական հայ ուսումնարանները, եկեղեցիները և խանութները: Մարդ շատ անգամ հոգու խորքում և՛ ծիծաղում է, և՛ խորին ցավ զգում, տեսնելով, թե ինչպես այդ մարդիկ ծտերի դեմ թնդանոթներ են արձակում և ինչպես իրանց մանր-մունր խլրտումներին ձգտում են համազգային նշանակություն տալ…:

Բայց թողնենք այս եղկելի երևույթը: Ես վճռել եմ այս մասին երբեք ոչ միայն չգրել, այլև չմտածել, եթե հնար կա չմտածելու: Կա մի ուրիշ ավելի նոր, ավելի հետաքրքրական և միևնույն ժամանակ, ավելի տխուր երևույթ, որին արժե մի առանձին նամակ նվիրել: Եվ իմ հաջորդ նամակը նվիրված կլինի այդ երևույթին:

V

Հյուսիսային Կովկասի հայաբնակ քաղաքներում մեծ հռչակ է վաստակել մի նոր տեսակի պարազիտ: Դա է այն հետաքրքրական ու տխուր երևույթը, որի մասին ակնարկեցի անցյալ նամակիս վերջում:

Ուր որ գնում էի, պարազիտի մասին անխուսափելի կերպով խոսակցություն էր բացվում և շատերը ինձ հարցնում էին, արդյոք ճանաչո՞ւմ եմ նրան կամ գոնե լսել եմ նրա մասին: Հարցը շատ բնական էր: Պարազիտը, դժբախտաբար, գրականության հետ մի ժամանակ մի թույլ կապ է ունեցել և ամեն ոք հավանական էր համարում, որ ես պետք է այսպես թե այնպես ճանաչեմ նրան: Ճշմարիտն ասած, ես անձամբ ոչ տեսել եմ այդ պարազիտին, ոչ էլ գիտեմ ով է նա, բայց այնքան բաներ լսեցի նրա մասին մի ճանապարհորդության միջոցին, որ ինձ համար միանգամայն պարզվեց նրա բարոյական պատկերը: Ամենքը, ով պատահում էր ինձ, խնդրում էին հրապարակ հանել այդ պատկերը: Մի քաղաքում ինձ մոտ եկան հատկապես այդ խնդրով երեք պարոններ: Ես առարկում էի, թե գրելով դժվար է պարազիտներին ոչնչացնել, թե միայն հասարակությունն ինքը կարող է նրանց առաջն առնել, անխնա ջախջախելով նրանց ամեն քայլում, բայց այդ չէր գոհացնում ոչ ոքի և ամենքը միաբերան ցանկություն էին հայտնում տպագրված տեսնել այն բոլորը, ինչ որ նրանք պատմում էին:

Ահա ինչու, որքան անախորժ լինի ինձ համար սողուններով զբաղվելը, ես ստիպված եմ իմ ներկա նամակը նվիրել նրանցից մեկին:

Փոքրիկ է իմ նկարագրելի պարազիտը, չնչին է և հազիվհազ նշմարելի մեր հասարակական կյանքի հորիզոնում, բայց նա վնասակար է և նոր, ուստի և՛ արժանի ուշադրության: Ուրեմն թող ներվի ինձ մի փոքր հեռվից սկսել նրա պատմությունը:

Թե ուր է ծնվել նա, ուր է սնվել ու կրթվել, չգիտեմ: Լսել եմ, որ նա մի օր երևան է եկել Կասպից ծովի ափերում, նավթաշխարհի մայրաքաղաքում, ուր մարդիկ մի քանի տարվա ընթացքում կամ միլիոնատեր են դառնում, կամ սնանկանում: Նախանձելով իր հայրենակիցների բախտին, նա էլ կամեցել է հարստանալ և այս մտքով մտել է, չգիտեմ ում մոտ, գործակատար: Համբերություն չունենալով տարիների ընթացքում ստորագրյալի պաշտոն վարել, որպեսզի մի օր «մարդ դառնա», նա վճռել է դիմել այնպիսի միջոցների, որոնք ավելի դյուրին են կյանքի ասպարեզում մի անկյուն գտնելու համար: Մեկն էլ այդ միջոցներից եղել է մի հայ լրագրի թղթակցելը: Նա սկսել է ցեխոտել այն մարդկանց, որոնց ճաշակը առհասարակ չի թույլ տալիս հասարակական շրջաններում խլրտողներին ձեռք մեկնել, և խունկ է ծխել այնպիսիների առջև, որոնք քեֆի ժամանակ երբեմն բարեհաճում են իրանց սեղանի փշրանքով կերակրել ամեն մի անցորդի, որ երգում է «ողորմություն արեք անտուն, անտեր պարկապզուկիս, ես գիտեմ և՛ մրոտել, և՛ փառաբանել ում կամենամ»:

Խեղճ հայ լրագրեր, եթե իմանայիք, թե ինչ մարդկանցից է բաղկացած ձեր գավառական թղթակիցների մեծամասնությունը, երբեմն ինչ տեսակ գորտերի համար եք բաց անում ձեր ամեն ինչի համբերող, ամեն բան ընդունող էջերը, կարծում եմ, ինչ որ էլ լինեք, գոնե մի քիչ կվրդովվեիք և գուցե այն ժամանակ փոխանակ պարծենալու ձեր «կուսակիցներով», կամաչեիք:

Հազիվհազ կարողանալով մի քանի տող անսխալ գրել, մեր նորագույն հերոսը չի բավականանում գավառական թղթակցի համեստ պաշտոնով և ձգտում է մտնել հասարակական գործիչների շարքը: Առաջին դեբյուտը նա տալիս է նավթաշխարհում, Սյունյաց երկրի մի գյուղի եկեղեցու օգտին հանգանակություն բանալով: Գտնվում են միամիտ մարդիկ, որ հավատ են ընծայում մեր հերոսի ձեռքում գտնվող «կնքած և վավերացրած» մատյանին, նվիրում են մի քանի հարյուր ռուբլի: Քիչ ժամանակից հետո «կնքած և վավերացրած» մատյանը բարձի տակ է մտնում, իսկ դրամը հալվում է մեր ջերմեռանդ եկեղեցասերի ջերմ ձեռներում...

Նվիրատուները մոռացության են տալիս այս փոքրիկ թյուրիմացությունը: Բայց որովհետև աշխարհը առանց չար մարդկանց չի կառավարվում, նավթաշխարհում էլ գտնվում են չար մարդիկ, որոնք երևի անգործությունից դրդված հետևում են ուրիշների ամեն մի քայլին: Մեկը այդ չար մարդկանցից մի օր մի ինչ-որ լրագրի մեջ հարց է բարձրացնում, «ուր գնացին Սյունյաց երկրի այսինչ եկեղեցու օգտին, այն ինչ թղթակցի ձեռքով հավաքված փողերը»:

Հարցը նեղն է գցում գյուղական եկեղեցու անվեհեր բարերարին: Նա աշխատում է պատասխանել, չի կարողանում, կմկմում է, վերջը տեսնելով, որ անհարմար է չար մարդկանց մթնոլորտում ապրելը, տեղափոխվում է Թիֆլիս:

Ո՞ւմ չի հայտնի, թե Կովկասի մայրաքաղաքը, իբրև ռուսահայերի «մտավոր կենտրոն», իր մեջ ինչ տեսակի հազարավոր հերոսներ է կենտրոնացնում: Մեր հերոսը, սեփական տուն չունենալով բարձր գնով ապահոված, որ մի գիշեր կրակ գցի, ապահովագինը ստանա և միանգամից ազատվի աղքատության սոսկալի ճիրաններից, մտնում է մի հայ լրագրի թևի տակ: Ձեզ հայտնի է, թե որքան դյուրին է ամեն մի անցորդի համար մտնել յուր ցանկացած (հայտնի) լրագրի խմբագրատուն և այնտեղ «խոշոր դեր» կատարել, ուրեմն կարող եք երևակայել, թե հիշյալ լրագիրը ինչ հաճությամբ է բաց անում իր ամենքի համար բաց դռները մեր հերոսի առջև, երբ իմանում է, թե նա «հանուն գրականության», ուզում է ձրի աշխատակցել:

Մեր հերոսը այս անգամ երևան է գալիս իբրև մի բավական շնորհքով շանտաժիստ:

Անցնում է քիչ ժամանակ, լրագրական բանվորի հասարակ հոդվածագրի դերը նրան չի գոհացնում: Նա մտածում է, որ լրագրական հոդվածագիրը, որքան էլ սրամիտ լինի, չի կարող գրականության մեջ անուն թողնել, մտածում է և վճռում է մի հսկայական քայլ անել և մտնել զուտ գրականության ասպարեզը: Նա ուզում է քնարերգակ լինել — ոտանավորներ գրել, վիպասան լինել — վեպեր և վեպիկներ գրել: Եվ գրում է, և՛ տպում են:

Հայ մամուլի այժմյան երևելի կրիտիկոսներին և գեղարվեստագետներին եմ թողնում կարդալ և քննադատել մեր հերոսի հանճարեղ ոտանավորները և վեպիկները, որովհետև հանճարներին միայն հանճարները կարող են գնահատել: Իսկ ես ոչ կարդացել եմ մեր հերոսի մտքի ադամանդյա արտագրությունները և ոչ ախորժակ ունիմ երբևէ կարդալու: Մի այն լսել եմ և միանգամայն հավատում եմ լսածիս, որ նրա ոտանավորները ներշնչված են խորին զգացումներով... դեպի ո՞ւմ և ի՞նչ... Այդ մի՞թե միևնույնը չէ:

Առանձնապես լսել եմ նրա վեպիկների և մանավանդ մի վեպիկի մասին, ուր մի ինչ-որ արծիվ մի ինչ-որ դատաստան է անում, չգիտեմ յուր գլխին, թե մի երևակայական ագռավի գլխին: Ասում են, որ շանտաժը այդ երևելի վեպիկի մեջ արտահայտվել է հեղինակին արժանի շնորհքով: Ահա ինչու հեղինակը արժանացել է Թիֆլիսի բոլոր նկուղներում մի բաժակ օղիի:

Այսպիսով, մեր հերոսը մտնելով գրականության սրբազան տաճարը, ինչպես տեսնում եք, ոչ այն դռներով, որով ընդունված է մտնել, այլ, այսպես ասած, черным ходом ինքն իրան սկսել է համարել և՛ բախտավոր, և՛ տաղանդավոր:

Բայց, օ՛հ, փուչ աշխարհ, արդյոք կա՞ քեզանում մի տևողական երջանկություն: Սև մուտքով գրականության տաճարը մտած սևերես հերոսը շուտով ցույց է տալիս իր իսկական շնորհքը: Եվ եթե կային մի քանի միամիտներ, որ կարծում էին, թե, իրավ, գոհար են գտել, այդ միամիտներն անգամ շուտով տեսնում են, որ իրանք չարաչար սխալված են եղել, որ կաչաղակին ապագա սոխակի տեղ են ընդունել, և հիասթափվում են: Ո՛վ կարճատև բախտ: Այս հիասթափման հետևանքը սարսափելի է լինում մեր հերոսի համար: Սև մուտքով գրականության տաճարը մտածի վզակոթին տալիս և նույն սև մուտքով դուրս են վռնդում: Սակայն նա դեռ մի քանի ամիս էլ այդ տաճարի նախասենյակում— լրագրության մեջ է մնում: Անցնում են այդ մի քանի ամիսները, և նա այնտեղից էլ է վռնդվում, այս անգամ արդեն լրագրական դռնապանների ձեռքով:

Այնուհետև պարզվում են մեր հերոսի մի քանի ուրիշ սխրագործությունները, և բանն այնտեղ է հասնում, որ իր հարազատ ազգականներն էլ երես են դարձնում նրանից: Այսպիսով, ինչպես մի ժամանակ նավթաշխարհի մթնոլորտն էր խեղդուկ, այժմ էլ Թիֆլիսի մթնոլորտն է խեղդուկ դառնում մեր հերոսի համար:

Նա ընկնում է մտատանջության մեջ. ի՞նչ անի, ի՞նչ գործով զբաղվի: Գնա նորից գործակատա՞ր դառնա— այդ անտանելի է: Տիրացո՞ւ ձեռնադրվի — այդ բոլորովին սազ չի գալ բանաստեղծի հռչակ վայելելու փափագով այրվող մի ավանտյուրիստի: Ուսուցչի պաշտո՞ն հանձն առնի: Բայց, նախ, ով կտա նրան պաշտոն, երկրորդ՝ ի՞նչ է ուսուցիչը իրոք: Մի համեստ արհեստավոր, որ կանգնած է հասարակական կյանքի վերջին աստիճաններից մեկի վրա և որը ոչ մի միայն հայերի մեջ է հասարակության մի մոռացված և արհամարհված անդամ, այլև նույնիսկ քաղաքակրթված ազգերի մեջ:

Մտածում է մեր հերոսը, սակայն չի հուսահատվում: Նայում է քարտեզին և տեսնում է, որ հայ ազգը այնքան շատ երկրներ է սփռված, որ իր նմանները դեռ երկար ժամանակ կարող են հարստության ասպարեզ գտնել այդ խեղճ ազգի մեջ: Եվ նա մի գիշեր

կարծեմ գաղտնի մտնելով այն լրագրի խմբագրությունը, ուսկից վռնդված է եղել, ծլկում է այդ լրագրի բաժանորդագրական անդորրագրերի մի ահագին կապոց և անհետանում: Նա քայլերը ուղղում է դեպի Հյուսիսային Կովկաս, ուր մարդիկ ավելի պարզամիտ են, ուրեմն և ավելի դյուրին խաբվող:

Թե ինչ սխրագործություններ է անում մեր հերոսը այստեղ — անհնարին է մի առ մի նկարագրել՝ այնքան շատ են նրա արածները:

Եկ հիշեմ իմ լսածների միայն մի մասը:

Նախ և առաջ, նա շտապում է սաղացնել իր հետ բերած բաժանորդագրական անդորրագրերը, ձևանալով վերև հիշված հայ լրագրի թղթակից: Պատահողին կպցնում է մի-մի նոր անդորրագիր, փոխարենը պոկելով մի-մի կարմրագույն թղթադրամ: Անցնում են ամիսներ, խաբվողները լրագիր չեն ստանում, թե «այդ մարդը մեր հավատարմատարը չէ պատասխանելու չենք նրա խաբեբայության համար»:

Բաս ո՞վ է պատասխանում: Իհարկե, հասարակության այն մրուրը, ուր ծնունդ են առնում այդ տեսակ սողուններ:

Այնուհետև մեր հերոսը դիմում է ուրիշ միջոցների: Մեկի առջև նա ձևանում է դարձյալ լրագրի թղթակից, խոստանում է գովել, եթե փող կտա, պախարակել, եթե չի տալ: Մյուսի առջև ձևանում է քաղցից մեռնող բանաստեղծ, որին «տգետ հասարակությունը չի կարողանում գնահատել», երրորդի առջև՝ «ժամանակից առաջ ծնված հերոս, որին ներկայի հետադիմությունը հալածում է», վերջապես, չորրորդի առջև ներկայանում է իբրև մի շատ բարձրաստիճան հոգևորականի հավատարմատար և այլն, և այլն և այլն: Եվ շատ տեղեր նրան հաջողվում խաբել մարդկանց, շատ միամիտներ են ընկնում նրա թակարդը: Երբ մի քաղաքում նրա դիմակը բացվում է, նա շտապում է հեռանալ ուրիշ քաղաք և այսպիսով երկու տարվա ընթացքում քաղաքից քաղաք, գյուղից գյուղ թափառելով, վերջը ապաստան է գտնում Դոնի ափերի մի քաղաքում, ապավինելով իրան մեր հայտնի բանաստեղծի հիշատակին: Նա այդ հիշատակն էլ սկսում է հարստահարել:

Վերջապես նա կարողանում է Դոնի ափերի մի լրագրի խմբագրի թույլ երակը գտնել և միառժամանակ էլ այդ լրագրի էջերն է զարդարում:

Անցյալ ամառ, երբ ես այդ քաղաքով անցնում էի, ամենքը զզվանքով էին հիշում մեր խեղճացած հերոսին և բոլոր դռները փակված էին նրա առջև: Բայց էլի նա դեռ ապրում էր այդ քաղաքում, որովհետև չապականված տեղ չէր թողել, ուր կարողանար դիմել:

Ես կարծում էի, որ գոնե Մոսկվա և Պետերբուրգ իմ ականջները ազատ կլինին այդ հերոսի քաջագործությունների պատմությունը լսելուց: Բայց բանից երևաց, որ այստեղ էլ հայ չի մնացել, որ անձամբ կամ նամակներով խաբած չլինի մեր բազմակողմանի հերոսը:

Վերջերումս լսեցի այն, ինչ որ կարելի էր սպասել մի այդպիսի արարածից: Դոնի ափերն էլ փշոտ համարելով իր բանաստեղծական գործունեության համար, նա ընտրել է իր համար մի նոր տեսակի բանաստեղծություն, ուր ստեղծագործողը վարձատրվում է թեև ընդհանուր զզվանքով, բայց և առատ նյութականով: Այստեղ արդեն Պոլսի մի առ մի մյուս աշխարհը ուղարկվող հայտնի հերոսները կարող են ուրախանալ, որ իրանց դափնիներին նախանձողներ գտնվում են նաև ռուսահայերի մեջ...

Այս է ընդհանուր գծերով այն նորագույն պարազիտը որ ծնվել է մեր ժամանակակից հասարակական կյանքի ասպարեզում: Տիպը բավական բնորոշ է: Ես տիպ եմ համարում իմ համառոտ նկարագրած հերոսին, որովհետև նա առանձնակի երևույթ չէ, այլ նորերումս բավական ընդհանրացած մի ախտ:

Մոսկվայում ես լսեցի այդ տիպի մի ուրիշ տեսակի մասին, որ բուն է դրել այնտեղ: ճիշտ է, գրականական աշխարհից չէ, բայց պատկանում է մեր բարոյական կյանքի մի այլ այնպիսի շրջանի, որ մեծ կապ ունի գրականության հետ: Իսկ Պետերբուրգում ես տեսա մի ուրիշ գրականական պարազիտ, որի բարոյական պատկերը ավելի ամփոփ է և ավելի կատարելագործված: Սակայն այս տիպարը այնքան գեղարվեստական է, որ ափսոս է նրան թռուցիկ նամակների նյութ դարձնելը…